

S U S U

Ա՞յս, այնպես կուզեմ ինձ ծեծես նորից,
Նորից ես փախչեմ, հեռանամ տնից
Ու հարևանի թուրատան անքում՝
Կատուների հետ սրբարթամ թաքուն։
Իսկ դու փետըրես, որոնես դու ինձ,
Կանչես՝ որտեղ ես, որտեղ ես, իս գիծ.
Ու կատուները անգետ, ակնապիշ
Նորից մլավեն... իմանաս նորից,
Ինձ բռնես... ու այս, լացես անխոռվ։
Ա՞յս, այնպես կուզեմ, թեկուզ ծեծվելով,
Քեզ տանջել նորից... մանկանալ նորից։



Ա՞յս, ինչ անուշ կըուկըռացին կոունկներըս
ու թռան,
Ուկեփրփուր ամպերով հեզանասիկ հազե-
լով.

Ու ես մանուկ, մեր գյուղի հին կալերից վա-
զելով,
Կանչում էի, որ կանգնեն, կանչում էի հու-
սաձայն։
Վազում էի, որ հասնեմ կոունկների երամին,
Ուկեփրփուր ամպերին, փետուրներին լու-
սաթու,
Կանչում էի, որ կանգնեն կոունկները ան-
մարմին,
Ինձ էլ տանեն ամպերով լուս հեռուներ ու
եթեր։
Վազում էի. բայց իզուր... իմ դեմ հազար ու
մի լեռ,
Իմ դեմ վիճեր խորընկա, իմ դեմ սարեր ու
սահման։
Վայս, ինչ դառը քրքչացին կոունկներըս ու
թռան...

T U T U

Մի օր առու է փորել ձրասփին,
Այգի է գցել, քարերը ջոկել,
Սարերից անգամ հող է շալակել
Ու չի խոնարհվել իր չարչարանքին։

Ու երբ աշունն իր մատանն է բացել,
Հպարտություն եմ տեսել ճակատին.
Ու ոսկի, ոսկի՝ աշնանամուտին,
Ինձ արարիչ է պապս թվացել։

ՍԱՄՎԵԼ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Բ դասարանի ուսանող)

